կացէք, հայր սուրբ, ես ոչինչ չեմ փչացնի»: Հայր սուրբը մոմը ձեռին կանգնած էր նրա մօտ եւ լուսաւորում էր նրա աշխատութիւնը: Յետոյ դարձաւ նա դէպի հայր սուրբը այդ խօսքերով:

— Տեսնո՞ւմ էք, հայր սուրբ, այդ մագաղաթները տախտակի տեղ են բանեցրել կազմի մէջ:

— Տեսնում եմ, — պատասխանեց աբեղան:

— Աւելի լաւ չէ՞ր լինի, որ չփչացնէին այդ մագաղաթները:

— Երեւի ուրիշ բանի պէտք չեն եղել: Բայց դրանց վրայ տառեր են երեւում: Այդ ի՞նչ տառեր են: Ջհուդի տառերի նման են:

— Ջհուդի տառեր չեն, — պատասխանեց Ջալլադը եւ շարունակեց իր գործը:

— Դուք ջհուդերէն իմանո՞ւմ էք:

— Իմանում եմ:

Հայր սուրբը զարմացաւ: Ես նոյնպէս զարմացայ:

— Եւ կարդո՞ւմ էք:

— Կարդում եմ: Եթէ թոյլ կը տայիք ես այդ Այսմաւուրքի կազմը կը փոխէի:

— Օրհնած, ի՞նչ հարկ կայ փոխելու, — ծիծաղելով պատասխանեց հայր սուրբը: — Մի քանի հարիւր տարի այդ կազմով «յոլայ է գնացել», հիմա էլ թող «յոլայ գնայ»:

Ջալլադը իր միտքը աւելի պարզեց, ասելով, թէ շատ շնորհակալ կը լինէր, եթէ հայր սուրբը թոյլ կը տար նրան վերառնել կազմի «անպէտք» մագաղաթները, այդ կը լինէր նրա համար մի թանկագին ընծայ վանքի կողմից, եւ եթէ հայր սուրբի իրաւունքից դուրս է այդ թոյլտուությունը, նա կխնդրէ այդ մասին նորին վեհափառութիւնից:

— Այդ ի՛նչ բան է, որի համար հարկաւոր լինէր նորին վեհափառութիւնից խնդրել, — ընդմիջեց միւս աբեղան, որ ինձ հետ մտաւ խոհարանը:

— Այո՛... բայց գուցէ կասկածանքի պատճառներ կտայի... Որպէսզի որեւէ տարակուսանք չպատահի, ես յետոյ կասեմ ձեզ, թէ ի՛նչ նշանակութիւն ունեն ինձ համար այդ մագաղաթները:

Նա այն աստիճան յափշտակուած էր իր գիւտով, որ բոլորովին մոռացել էր իր իսկական դերը: Նա վեր առեց ահագին Այսմաւուրքը իր գիրկը, եւ մենք դուրս եկանք խորանից: Վարդապետները մեզ տարան այն խուցը, որ յատկապէս պատրաստուած էր մեզ համար: Ասլանը դեռ չէր վերադարձել: